ՆՈՐ ԳՐՔԵՐ

Ա. Գ. ԿԱՐԻՆՅԱՆ.— «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության», հատոր 2-րդ. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ. 534 էջ. գինը՝ 2 ռ. 39 կ.։

Սույն հատորի մեջ բնութագրվում են գաղութահայ այն պարբերականները, որոնք լույս են տեսել Արևմտյան Եվրոպայում 19-րդ դարի սկզբից մինչև 70-ական թվականները՝ մասնավորապես Վենետիկում, Վիեննայում, Փարիզում և Մանչեստրում։

Հեղինակը բնութագրում է «Մասյաց Աղավնի», «Փարիզ», «Արևելք», «Արևմուտք» և գաղութահայ այլ պարբերականներ և տալիս նրանց կատարած դերի գնահատականը։

Այս հատորի գրական-պատմական ակնարկներին կցված առանձին հոդվածի մեջ կանգ է առնվում արևմտյան գաղութների ուշագրավ գործիչների և խմբակցությունների ուրույն նկարագիրը բացահայտող նշանակալից հանգամանքների, դեպքերի, փաստերի և վավերագրերի վրա։

Գրքի վերջին մասում զետեղված են գաղութահայ պարբերականների պատմության բնորոշ մանրամասնությունները լուսաբանող ծանոթագրություններ։

ԳՈՒՐԳԵՆ ՀՈՎՆԱՆ.— «Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դարերում», գիրք առաջին. Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ. 517 էջ, գինը՝ 1 ռ.։

«Ռուս-հայ գրական կապերը 19—20-րդ դարերում» աշխատության առաջին գիրքը բաղկացած է երկու մասից։ Առաջին մասում հեղինակն անդրադառնում է XIX դարի առաջին կեսի ռուս-հայ գրական-կուլտուրական հարաբերություններին, ապա այդ շրջանի ռուս մեծ գրողներից նա վերցնում է Գոգոլին, որի անվան հետ է կապվում ռուս գրականության զարգացման մի ամբողջ դարաշրջան, ցույց է տրվում գոգոլյան տրադիցիաների դերը հայ գրականության և թատրոնի զարգացման գործում։ Գրքի երկրորդ մասը նվիրված է ռուս 60-ականներին՝ Չերնիշևսկուն, Դոբրոլյուբովին, Նեկրասովին, որոնք նոր էջ բացին Ռուսաստանի ժողովուրդների գրական-հասարակական և ռևոլյուցիոն մտքի պատմության մեջ։ Արխիվային հարուստ նյութերի հիման վրա հեղինակը ցույց է տալիս հայ մտավորականության գաղափարական սերտ կապը ռուս 60-ականների հետ։

Ն Ո Ր Գ Ր Ք Ե Ր

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹԼԿՈՒՐԱՆՑԻ.— «Տաղեր», աշխատասիրությամբ էմ. Գիվազյանի։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի հրատարակչություն, Երևան, 1960 թ. 298 էջ, գինը՝ 70 կ.։

Գիրքը բովանդակում է միջնադարյան հայ աշխարհիկ պոեզիայի նշանավոր ներկայացուցիչ, XV դարի տաղերգու Հովհաննես Թլկուրանցու ստեղծագործությունների քննական բնագրերը, որոնք պատրաստված են Հայկական ՍՍՌ մատենադարանում պահպանվող բազմաթիվ ձեռագրերի հիման վրա։ Աշխատության առաջին՝ «Ուսումնասիրություն» մասում քննարկվում են Թլկուրանցու ապրած ժամանակաշրջանի և նրա ստեղծագործության հետ կապված հարցերը, գրականագիտական ու բանասիրական վերլուծման են ենթարկվում նրա երկերը, պարզաբանվում տաղերգուի տեղն ու դերը միջնադարյան հայ գրականության զարգացման մեջ։

Գրքի վերջում զետեղված է «Ծանոթագրություններ և բանասիրական դիտողություններ» բաժինը, ուր տեղեկություններ են տրվում յուրաքանչյուր տաղի մասին և լուսաբանվում նրանց հետ կապված բանասիրական զանազան հարցեր։

НОВЫЕ КНИГИ

М. НЕРСИСЯН. *Из истории русско-армянских отношений.*

(книга вторая). Издательство АН АрмССР. Ереван, 1961 г. 463 стр. Цена 1 р. 17 к.

В книгу включены две работы автора: «Новые материалы о пребывании Д. В. Давыдова в Армении» и «Декабристы в Армении». На основании богатого архивного и литературного материала автор показывает военную и дипломатическую деятельность знаменитого поэта-партизана Д. В. Давыдова в Армении в 1826 г. и участие сосланных на Кавказ декабристов в присоединении Армении к России. В книге приводятся также сведения о встречах и знакомстве декабристов с армянскими деятелями и освещается ряд других вопросов, связанных с историей русско-армянских отношений в начале XIX века.